

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅԱԿՈԲ Յ. ՇԵՔԷՐԵԱՆ

ԽՐԱԳԱԳՐԱՏՈՒՆ
Զգուր խան, Թիւ 54
ԻԶՄԻՐ
10 ՓԱՐԱ

ԽԱՊԱԽՈՂԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԲ

اداره خا
ازمیرده چقور خا ده
نومرو ۵۴

ձեռագիրները
ես չեմ տրուիր
10 ՓԱՐԱ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՔԵՐ



ՎԵՐԶԱՊԷՍ. . . :

Վերջապես. . . :

Ազգային ժողովը վերջապես իր վերջին Ուրբաթի նիստին մէջ վերջակեալ դրեր է սա մզոտած, կեղտոտ Երուսաղէմի հաշուական խնդրին՝ որ տարիներով ժողովէ ժողով, օրակարգէ օրակարգ եւ դիւանէ դիւան քաջքուռէ վերջ, կարծես այլ եւս ուժասպառ, այս անգամ կ'առանայ վնասողական հարուածը:

Վերջապես Ղեւոնդ Վարդապետ եւ իր հաւատարիմ պնակաչները Ազգային ժողովին մէջ կ'ստիպուին անձնատուութեան դրօշը պարզել թշնամիին, որ այս անգամ չախջախիջ մեծամասնութիւնով մը մը կուգայ իր արդար եւ զօրաւոր ձայնը ազդեցնելու:

Այլ եւս ոչ մէկ բանով կրնան խնդիրը երկարեցնել Միրզա Մսերեան եւ ընկերութեան անդամները, ոչ իսկ «Ծիածան», «Փիւնիկ», «Գաղափար» եւ ասոնց համախոհները որոնք դրամի ուժին տակ իրենց վրայ քաջած իբր թէ արդարադատութեան դիմակը, տարիներով պաշտպանեցին այն աւազակային որջը որ մէկ կողմէն կը ըստնար եւ կը տարածուէր ի վնաս ամբողջ ազգին եւ յ'անպատուութիւն հայ կղերականութեան:

Ղեւոնդ Վարդապետի դատաւարտութիւնը նոր բան մը չէ ազգին համար: Ան, հակառակ իր մտածած հազարումէկ էնթրիկներուն, խաչերով արդէն կնքուած էր խաչագողի անունով: Ազգային ժողովի դատաստանը ոչինչ է, եթէ ոչ պաշտօնական վաւերացումը այս ընդհանրականապէս գոյացած գաղափարին:


Դուռ, չէր մնացած զոր Ղեւոնդ Վարդապետ զար-

կած չըլլար, ճամբայ չէր մնացած որուն ան դիմած չըլլար ելքի միջոց մը գտնելու. համար այն վիճէն որուն մէջ ինկած էր ծանրաբեռնուած հազարաւոր ջորթուած ոսկիներով:

Ծիծաղելին հոն է որ Ազգային ժողովի այս վերջին անմոռանալի նիստին մէջ իսկ, Ղեւոնդեան խմբակին հաւատարիմ անդամները վերջնական փորձ մընալ ըրեր են, խնդիրը երկարաձգելու. աւելի բարդ հանգամանք մը տալով, անոր, բայց կերելի թէ վերջապէս այ բաժակը չեցուած էր մինչեւ բերանը, քանի որ Միրզա Մսերեանի ձայնը խեղդուէր մնացեր է մեծամասնութեան ձայնին մէջ:

Խեղճ վարձուած ձայներ. . . :

ՕՍՏՈՆՏԻ



ԱՆԿԵՐՊԱՐԱՆ ՎԻՃԱԿ

Ս. Պատրիարք հայրը տակաւին հրաժարած կը մնայ. . .

Անա ցաւալի իրողութիւնը, որ մեր ականջները կը դռնէցնէ:

Օրհնեալ Սահմանադրութենէ առկին հայերը, եղբայրութեան, ազատութեան եւ հաւասարութեան ծախաներս, մեր շուրջի իրողութիւնները եւ եղելութիւնները վարդագոյն տեսնելու այն աստիճան վարժուած էինք որ, Առանալի եղեռնը եւ անկէ ծագում առնող Ս. Պատրիարքին հրաժարականք ակամայ կուգան մութ քող մը, ապստամբ ամպ մը սփռել, մեր դիւրահաւաններուս, երջանկութեան պայծառ մտնոյտրտին վրայ:

Այո, սոսկալի է տեսնել, հանդիսատես ըլլալ սրտմաշուքի, սիրտխաղի այն նուպաներուն՝ որոնց ենթարկուած է բռնութեան նիրաններէն հազիւ ա-

զատած եւ, վայրկեան մը ազատութիւնը վայելած ժողովուրդ մը:

Ս. Պատրիարքը չաւ գիտէր այս կէտը եւ անոր համար հրաժարեցաւ: Անիկայ ի՞նչ պիտի պատասխանէր ազգին, երբ այն հաշիւ պահանջէր իրմէ. . . : Աւելի չաւ էր հրաժարիլ քան թէ ապագայի որ եւ է դէպքի մը համար պատասխանատու ըլլալ:

Այսօր երեք ամիս է որ Դուրեան Սրբազան հրաժարած կը մնայ: Անվերջ բանակցութիւններ եւ անհասկնալի խորհրդակցութիւններ իրար շահորդեցին: Արդիւնք ոչինչ. . . : Կառավարութեան երեք ամիս առաջուան տրամադրութիւնները ինչ որ էր նե՛ն՝ նոյնը կը մնայ եւ այսօր, ոչի՛նչ նոր, ոչինչ փոխուած: Եւ փայլուն ապագայի եւ մոռացումի յոյսերը զորս որոնացինք ի ներքուստ, չատնց արդէն վտարուեցան մեր մտքերէն:

Կացութիւնը նոյնն է, չփոթ եւ անհասկնալի, անվերջ բանակցութիւնները յոյսի վերջին նշոյլ մ'ալ չցուցուցին մեր մոլեգնած ակնարկներուն առջեւ:

Ի՞նչ ընել, որո՞ւ դիմել: Օսմանեան Սահմանադրական Կառավարութիւնը միթէ բարեացակամութիւնը չունե՞ցաւ վերջ մը դնել այս չփոթ վիճակին: Մեր գաղափարով, Պատրիարքի մը հրաժարականը ամիս մը միայն առ կախ կը մնայ, անկէ վերջ գործը կը կարգադրուի երկուստեք համաձայնութեամբ: Դուրեան Սրբազանի պահանջները այնքան անտրամաբա՞ն էին եւ կամ կառավարութեան պատասխանը այնքան անբարարա՞ր էր որ այս հրաժարականի խնդիրը այսպէս երկարեցաւ:

Ինչո՞ւ այս խորհրդապահութիւնը, ինչո՞ւ այս չապաղումը, ինչո՞ւ անգէտ պահել ժողովուրդը անցած դարձածէն:


Միթէ չաւ բա՞ն է ազգ մը, համայնք մը սրամաշուքի մէջ թողուլ ամիսներով, առանց թող տալու, անոնց որպէսզի իմանան իրենց խկական դիրքը, վիճակը:

Պոյսոյ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, պարտաւոր է խնդիրը չըջօրէն ձեռք առնել: Այլ կը բաւէ որքան որ սիրտխաղի մէջ մնացինք, հասկըցուցէք, իմացուցէք մեզ թէ ի՞նչ պիտի ըլլայ Պատրիարքին հրաժարականը: Ի՞նչ պիտի ըլլան մեր դիրքը եւ մեր իրաւունքները:

Հերիք ազգը ուրբան որ սպասեց:

Յ. . .

Պ Ա Ր Ո Ւ Հ Ի Ն



Նշույագեղ յոյսերու մէջ ողորուն,
Պարասրանց հոգեհմայ թուր մ'ունի,
Ու պարուհւոյն նաշանքները, նուրբ, ճկուն
Նայուածքներու մէջ կը հաշին գողունի:

Միւր գիքներու հըսարտ շէշտին հետ անխախտ
Իր ձոյց մարմնոյն դարձուածքներէ նկանացի,
Շրջագգեստի կարմիր յորձանք մը առկախ,
Թրթուր մներու հետ օդին մէջ կը յաճի:

Զինաթորմի շանջքէն ի վար հոյի,
Զոյգ ծիծերու առատութիւն մը տարութեր
Լոյսերու կոյս համբոյրին տակ կը հաշի,
Հոգիներու տառապանքին անտարբեր:


Սրունքներու ճոյլ օրրումի ծալքերէն
Թաւից մարմնոյն յորդութիւններ մեղմաբար
Անվերջ հոգեռոյ շուռ սրբոյթը կը չլկեն
Երացանուրբ ցոյցը անքով խօշապար:

Ու պարն տակաւ կ'ոգեսորի եռանդուն
Զոյլ թեւերու ջրջանակին մէջ դաշար
Քնքուշ շանջքը կ'ալեծելի պարուհւոյն
Հրմայելու անցուստ տենջով բոյալատ:

Այլ կը մարին տարփոտ յոյսերն սրանին
Մեղմ գիշերով, հանդարտօրէ՛ն, յուշօրէ՛ն,
Հեշտերգութեանց թոյլ ծփանքներ կը սահին
Լուսամուտի բացուածքներէն համօրէն:

Ու պարտաւոր գերթ մի հուրի դիւթական
Պատուհանի առջեւ, փոռած պարտին
Մահը կուշայ իր ձիւն մարմնոյն կուտութեան
Յարեթմայտու գիշերին մէջ աշնային:

Վ.ՐԱԺԵՆՈՒՆԻ





Ս. ՅԱԿՈԲԱՅ ՈՐԲԱՆՈՅԸ

Գուժը, բոթը, Պոչսեն կուգայ այժմ, այդ գերագան-
ց սպես (?) քաղաքակրթեայ վարչագետ եւ. ազգասէր
կեդրոնէն . . .

Ոստիկանութեան միջոցաւ Որբանոցէն դուրս վը-
ռնտեչ, անտէր, անտերունջ որբեր. . . : Ահա շանթա-
հարիչ չուրչ գոչ մեզ կը հաղորդեն թերթերը:

Որբերը, տառապանքի եւ. հաշտանքի այդ զոհերը
բռնակալ ուժի միջոցաւ այդ հաշտականները, տունէ, ըն-
տանիքէ այդ զրկեալները, որբերը կ'ըսեմ, որոնք
մայրիկի եւ. կամ հայրիկի երես չ'տեսած, անգութ
դաժնեմերու ձեռքերէն խլուած, եւ. յաւիշտակուած
այդ իշխանները, այժմ կը վտարուին, փողոցի ջակու-
ներու. նման, դուրս կը նետուին այն յարկէն որ Որ-
բանոց կը կոչուի, եւ. ի բո. ստուերին, կամարներուն
տակ է միայն որ անոնք կը ստանան էլն մի տունէ հան-
գաւորութիւն վայելեչ, յոյսով սնանիչ եւ. կեանքը հաս-
կնալ իր իսկական վիճակին մէջ:

Զպիտի ուղչի երբէք հաւատալ այս չուրին, այն
աւտինսնի խտոր կը համեմատէր դատողութեան
հետ. սակայն երբ ակտուր իրականութիւնը իր ման-
րամասնութեամբ պարզուեցաւ. աչքիս առջեւ, երբ
երեւակայեցի որ ոստիկանները հրացան ի ձեռին եւ.
կախաշան մարդ առաջնորդողի մը հովերով Որբա-
նոցի դուռէն դուրս կը նետեն Տ() է աւելի որբ եւ.
անտերունջ պատանիներ, այն ատեն է որ նշմարեցի
անխղճութեան, անզգայութեան այն անդունդը որու
մէջ գլխորուած էր ապաւն ի տապալ, Որբանոցի խը-
նամակալութիւն կոչուած կեղծ ազգասէրներու հոյժ
եւ. Որբանոցի Ուսուցչական մարմին կոչուած այդ
պորտաբոյժներու երամակը:

Խնամակալութեան մէջ չ'գտնուեցաւ. խղճի տէր
անձ մը որ արգիլէր զայն այսպիսի ձերնարկէ մը:
Արդեօք զգացուի, խղճի խայթ ջստած բաները այն-
քան կուրցած էին իրենց մէջ:

Դուրեան Սրբազան արդեօք չ'կրցաւ արգիլել զա-
նոնք: Սրբազան Պատրիարքին ողորմասիրտութիւ-
նը հանրաժանօթ է, ուրեմն ի՞նչ բանի վերագրել
իր անտարբերութիւնը այս խնդրին հանդէպ: Պատ-
րիարքական փոխանդը որ խնդրին տեղեակ է ե-
ղէր առաջուց, ինչո՞ւ անոր առաջքը չ'առաւ, ին-
չո՞ւ կարելի միջոցներ չ'ըրար եւ. թոյլ տուաւ որ Ազգ.
արժանապատուութիւնը ծանր հարուած մը կրէ:

Բայց չ'գտնուեցաւ. արդեօք իրենց մէջ գէթ միակ
մշտածող մը որ ըսէր—մենք հիմա այս որբերը կը
վռնտենք կոր, չաւ, բայց ի՞նչ պիտի ընեն անոնք,
ինչո՞վ պիտի է ապրին, անոնք տակաւին գործի ըն-
դունակութիւն չունին, ի՞նչ պետք է ընեն ուրեմն.
կամ գողութիւն եւ. կամ անբարոյութիւն . . . :

Այդ Պարոնայք խնամակալներուն մէջ չ'գտնուե-
ցաւ. գոնէ մէկը որ տաանկ մտածեր եւ. ծախող ծի-
ծաղեցի եւ. անբարեխիղճ ձեռնարկէ մը ետ կեցներ
իր ընկերները: Ուրեմն տաանկ ամենաչնչին պա-
րագայի մը մէջ ալ տրամաբանեցու, մտածեցու կա-
րող չեղողներն են որ ամէն մեղքիս վրայ, կը չաւա-
նին ազգին ճակատագիրը ուղղել, զայն կառավարել
եւ. մէջմէկ տիքթաթորներ ըլլալ եւ. կամ պատու-
հասներ, դժբաղդ ազգին գլխուն:

Բայց մենք պետք է շուտ թոթուենք անոնց չուժը:
Հերիք այլ եւ.ս, դո՛ւք վարդապետներ, խնամակալ-
ներ, թաղականներ, հոշաբարձուներ:

Հերիք ազգը խաբեցիք, հերիք անոր աչքը
չ'մոռեցիք, հիմա կարգը եկաւ. որ դիմակնիդ իշնայ
եւ. ժողովուրդը աչօք բացօք հասկնայ, իմանայ թէ ո-
րոնք են եղեր կեղծ ազգասէրները եւ. ազգին դաւա-
ճանները, դո՛ւք թէ ազգին միւս ընտրեալ, զարգաց-
եալ դասակարգը եւ. որուն հասցէին դո՛ւք, երեսունչ
ազգասէր եւ. սրտանց կեղծերդ, չ'ստան հաշիւները,
չ'տեսնուած ամբաստանութիւնները տեղացուցիք:

Վա՛յ ձեզ, եւ. միեւնոյն ատեն ամօթ ձեզ:

Վերելի տողերը գրուած էին արդէն, երբ Զորեք-
շաբթի օրուան «Դաշինք» ին մէջ աչքիս զարկաւ.
Հ. Ս. ստորագրութեամբ յօդուած մը Ս. Յակոբայ Որ-
բանոցին շուրջ:

Հ.Ս. ուրիշ մէկը չ'կրնար ըլլալ, բայց եթէ թերթին
արտոնատերը, Հրանդ Մամուրեան, քանի որ այն
միայն կրնայ տաանկ ծիծաղելի եւ. միեւնոյն ատեն
հակասական գրութեան մը ներքեւ ստորագրութիւն
դնել:

Հ.Մ. որ կ'երեւայ իր չորերէն Պոլսոյ ուշտորմանի-
օննի «Հայրենիք»էն կը քաղէ, որքերը իբրեւ ըմբոս-
ներ կը ներկայացնէ իրենց ուսուցիչներուն հանդէպ,
անոնք ապակիներ կը կոտրեն եղեր, հակակրօն ցոյ-
ց'ը կ'ընեն եղեր եւայլն:

Ասկէ աւելի յերկրս սծոյ եւ միեւնոյն ստեն անբա-
րեխիւն չորս մը կարէի չէ երեւակայել: Արդէն
այդ «Հայրենիք» կոչուած յերկրածոյ չորերու տա-
կաւոր ասկէ առաջ ալ անանկ ապուր մը կերած էր
Աղթամարի խնդիր անուս ստութիւն մը մէջտեղ
գլորեցնել:

Քննութիւնը մէջտեղ հանեց թէ Աղթամարի կո-
ղովորները ո՛չ թէ յեղսկոյնականներն էին, այլ
զանոնք ամբաստանող Յովսէփ եպիսկոպոս կոչուած
ծթում ճերուկը:

Հիմա «Հայրենիք»ի խոցովակէն անցնող այս
ապակի կոտրելու եւ հակակրօն ցոյցեր ընելու չոր-
քնոյն չափով ճշգրիտ համարել պէտք է, քանի
որ Աղթամարի խնդիրը 'ի յայտ բերաւ «Հայրենիք»ի
ստում չորերուն որ աստիճան ճշմարիտ ըլլալը:

Իբրեւ է թէ որքերը բողոք բարձր են իրենց տես-
չին դէմ, բայց ասով միթէ մահացու մ'եղք մը
գործած կ'ըլլան եւ կամ հակակրօն ցոյց չընել
կ'ըլլան:

Արդէն իզմիրցիքս Պոլսոյ Որբանոցի տեսուչը եղող
այդ Պաշապանեան կոչուած շնորհումակին ի՞նչ խ-
մորէ չինուած ըլլալը գիտենք, տակաւին տարի-
ներ առաջ իզմիրի մէջ կատարած տխուր դերը մոռ-
ցուած չ'է մեր մտքերուն մէջ:

Արթէ որքերը այսպիսի խարանեայ անձի մը
դէմ բողոքելով ըմբոստութիւն ըրած կ'ըլլան:
Խոնի ո՞ր օրէնքը, մարդկութեան ո՞ր կանոնը կը
թոյլատրէ որ այդ բաղդագուրկները տակաւին
անքայլին իրենց տեսչին բռնութիւններուն տակ:

Պր. Հրանդ Մամուրեան, կըսէք թէ այդ որքե-
րուն մէջ իրաւամբորբ անունին համապատասխանող
հատ մը իսկ չ'կայ: Այդ չորքը կրնայ շատ չորս վեր-
ցնել, քանի որ «Հայրենիք» ի չորերուն վրայ այլ
եւս հաւատարմութիւն չունինք: Բայց, ենթադրե-
լով թէ՛ ճիշդ ըլլայ այն՝ անոր համար պէ՞տք էր որ
անմիջապէս Որբանոցէն դուրս վճռուէինք զանոնք
առանց անոնց համար ապագայ մը մտածելու եւ
կամ գործ մը հայթայթելու: Ի՞նչ պիտի ընէին անոնք
Պոլսոյ փողոցներուն մէջ, այդ 50 որքերը, չ'է մի որ
առաջինը 'ի մոռութիւն պիտի մղուէին:

Բայց ասո՞ք հասկնա՞յու համար մարդ պէ՞տք է մը-
տածէ, խորհի, բան մը որ ձեր նմաններուն կը պատի:

Չ'մոռցած էիք նաեւ մի քանի խաբ անուէ
«Ազատամարտ»ի հասցէին:

Պոլսոյ շնորհագարդ աղբարիկիդ, «Հայրենիք» ին եւ
ներ բերնի՞ ծամոցը եղած է «Ազատամարտ»: Չ'կայ
գրութիւն մը եւ կամ բացասութիւն մը որուն
մէջ հայհույներ եւ կամ ոռնոցներ նետուած չ'ըլլան
«Ազատամարտ»ի հասցէին, առիկա ձեր թշնմա-
մըն է եւ մի գուցէ եթէ որ մը գերեզմանատան
փոսն անգամ տեսնէք, այն օր ալ վաշ չ'պիտի անց-
նիք «Ազատամարտ»ի դէմ յարձակելէ:

Բայց այդ գրութեան մէջ մաս մը կար, որուն
խմատին չ'կրցայ թախանցել ճիշտը: Իթիհատ
թերագրելի եւ Դաշնակցութեան համաւայնութիւնը
ի՞նչ կապ կրնար ունենայ Ս. Յակոբայ Որբանոցիդ
խնդրին հետ: Ահա հակապակաս կէտ մը, որ դարձ-
եայ ճիշդ կրքեր բռնկեցնելէ եւ մէջտեղ ասելութե-
ան որով ցանկէ գատ ուրիշ արժանիք մը չ'ունի:

Այ երանելի մարդ աստուծոյ եւ «Դաշինք»ի,
չ'էիք կրնար արդեօք առանց Դաշնակցութեան ա-
նունը խառնած ըլլալու յօդուած մը գրել, այդ
որքան ազգասիրութիւն, որքան պարտաճանաչ
հայրենասիրութիւն . . . :

Պր. Մամուրեան, եթէ իրօք դուք էք Հ. Մ. ստո-
րագրուցը, եթէ իրօք ազգասէր էք, առանց կեղծ
ըլլալու, փոխանակ հեռուները երթալու, հոս, իզ-
միրի մէջ ազգասիրութիւնը փայլեցնելու շատ կա-
րելոր խնդիրներ կան, օրինակ, անցեալ շաբթուան
«Իզմիրի»ի մէջ հրատարակուած պորտաբոյցները
կան, այսինքն ազգին կաշուածներուն մէջ բնակող
եւ վարձք չ'վճարողները, ահա առիթ մը ձեզ
համար, անոնց դէմ գրեցէք, հարուածեցէք զանոնք,
եւ եթէ կարող էք արդիւնքի մը յանգիլ, այն ստեն
է որ ձեր ազգասիրութիւնը հրապարակաւ յայտ-
նած կ'ըլլայ:

Ազգասիրութիւնը ճշմարտութիւններ խեղաթիւ-
րելու եւ աս ու ան մրտաւելու մէջ չ'կայանար:


ՀՐԱՅՐ ՍՄԱՍՏ





ԺԱՄԱՆԵՒ ԲԱԺԻՆ

Մ Ո Ւ Թ Բ Ի Ծ Ը



— Վայ դու՞ն ես. սա մեր բարի Շիրօջէն. իրաւոր դար մը կայ որ գիրքը չէինք տեսած . . : Եւ ի՞նչ կընես դուն հիմակ :

— Ի՞նչ կընեմ . . : Իրաւ է դու՞ն չես գիտեր . . : չաւ ուրեմն, բարեկամս, ես ամուսնացայ :

— Ամուսնացա՞ճ, ի՞նչեր կըսես :

— Կը զարմանաւ այնպէս չէ, Շիրօջէն ամուսնացա՞ճ, ճերուկ Շիրօջէն, կը յիշե՞ս մեր փոքրիկ կատակները հէ՞ . . : այո՛ւ՝ ամուսնացած, ամուսնացած . . :

— Եւ քու կինդ :

— Սիրելիս, աշխարհիս ամենապաշտելի, ամենաազնիւ ու յարպիկ էակը : Տասը ամիսէ որ ամուսնացած ենք : Թերեւս չի հաւատաւ երբ ըսեմ նաեւ թէ առաջին օրուան պէս երջանիկ ենք, գոգցես երկու սիրտաւորի աղաւնիները ըլլայինք . . :

— Անկեղծ շնորհաւորութիւններս սիրելի Շիրօջէն . . : Այսպէս ուրեմն, տուն տեղ եղար հէ՞ . . : հապա ընտանիքդ ու զաւակներդ . . :

— Ո՞չ դեռ ոչ. կը հասկնաս անշուշտ . . : Մենք դեռ մեղրալուսնի եռամսեայ միջոց մանինք առջեւին, որուն մէկ ամիսն իսկ չէ չրացած . . :

— Պրա՛յժ. Յարգանքներս Տիկին Շիրօջէն. եւ անկեղծ մաղթանքներս Զեր երկուքին . . : Բայց ներեցեք ճետաքրքրութեանս, ամուսնական կեանքէ դուրս ի՞նչ բանով կ'զբաղիք :

— Ճիշտ է, այդ չքսի քեզի . . : Ահա թէ ինչպէս : Բան մը չեմ ընէր . . : Կը փափաքէի բանով զբաղիլ, սակայն չեմ կրնար : Ես այնքան տրամադրելի ժամանակ ունիմ, բայց ատով հանդերձ միջոց չեմ գտներ . . : Բայց ներեցեք սիրելիս, ճիշտ տաւրջարիկեան կայ թրէնին մեկնելուն : Ես կը մեկնիմ դէպ ի վէջը-տ'Ալքէյ, ըսին թէ վարձու ամառանոց մը կայ հոն : Ինձի չ'ես ընկերանար :

— Անկարելի է, բարի յաջողութիւն, երթաւ բարեաւ չեմ ըսէր :

— Առանց մնաւ բարեաւի . . : Լաւ ուրեմն, երբոր տեղաւորուինք կը յուսամ թէ կուգար մեզ հոն տեսնելու :

— Անշուշտ ամենամեծ հաճոյքով :

Այս խօսակցութենէն ի վեր վեց ամիս անցաճէր, յորմէ յետոյ անգամ մընալ գինքը չէի տեսած, նոյն իսկ կը խօստովանիմ թէ այս պատուական Շիրօջէն յիշատակը միտքէս իսկ ելած էր, երբ օր մը դուսնս զարնուիլը չսեցի :

— Դուռը չիբանա՞ս, ես եմ ճերուկդ . . : Շիրօջէն էր :

Զիս բազկայր մէջ սեղմեց, ու կարեւոր եւ կենսական բան մը ըսելու ձեւով մը :

— Սիրելիս քեզ պիտի տանիմ, յարեց :

— Ո՞ւր :

— Զի հասկնա՞ս, մեր բոյնը, ու պիտի տեսնեիմ հաւերս, վառեակներս ու բաղերս, որոնցմէ երկու հատ ունիմ, երեք հատ պահելու միտք ունիմ թէեւ, բայց չոր չիկայ . . : Պիտի տեսնես նաեւ կինս, զոր տեսնելով եթէ չգմայլիմ, պիտի ըսեմ թէ անեղօրէն զրահաւորուած անզգայ սիրտ մ'ունիս . . :

Յետոյ ձեռքը գրպանը տանելով երկու հատ փոքրադիր յուսանկարներ հանեց :

— Տե՛ս, ասիկա յատկապէս քեզի բերի, մղելու համար զքեզ որ գաս մեզ տեսնես . . : Ի՞նչպէս կը գտնես . . : Իմ գործս է :

Քիչ մը մուծ, եւ պիտի ըսեմ շատ մուծ, այլ սակայն հագուազիւտ երեսակալութեան մը արդիւնքը եղող պատկեր մընէր այս, ուր կարելիէր որոշապէս նշմարել որթատուներով չրջապատուած ամառանոցի մը առջեւի մասը, եւ անոր պատշգամբին վրայ հակած միւնսօն նրբահասակ կին մը :


— Կը տեսնե՞ս այս, աւելցույ իվերշոյ, ասիկա ամառանոցիս հարաւային մասն է, որ պատշգամ ալ ունի . . : Երեք օր կայ որ զայն քննեցի մշուշապատ օդով մը : Ինչպէս է, բաւական սիրուն է, հապա կի՞նս : Ատոր ի՞նչ կըսես : քանզի նոյնինքն, իմ կինս սիրելիս . . : Նա կը պաշտէ իր պատշգամը, հոգի կուտայ ատոր վրայ թէեւ դուն չուզես ատոր հաւատալ : Երեսակայ՛է, այդ իրիկունը գործիքովս ազարակէ մը կը վերադառնայի, ուր

միեր, կովեր, վառեակներ, եւ դեռ ինչ գիտնամ
զստ մը բաներ չուսանկրած էի: Հեռուէն կ'իմ
պատշգամբ կը նշմարեմ . . . : Կեամբ կը պահուտիմ
մ'ացառոտի մը ետին, եւ . . . մէկ, երկու, երեք.
Կ'իմ չուսանկրուած էր . . . : Եւ դեռ, ատկէ չուր
չունի, եւ գոր սակայն իր տօնին օրը իբր սիրբ-
րից մը իրեն նուէր պիտի ընեմ . . . :

Շարունակելի

Թրգմ. ՀԵԹՈՒՄ

ԲԱՍԻՅԷ ԼՇՄՈՒԼԻ



Ք Ր Օ Ն Ի Կ

Կարծես նուրիստագրականօրէն միշտ ստիպուած
պիտի ըլլանք թատերական ամէն քրօնիկը սկսելէ
սուտ ննդամ մը տրոնջելու. իզմիրի հայութեան իր
թատրոնին նախամար ունեցած խույ անաարբերու-
թեան դէմ:

Այսպէս, նորէն Երեքշաբթի գիշեր հագիւ. քանի մը
տասնեակներ ածապարած էին կեակիտելու. Կէյի
պարսպ թատերասրանը եւ վայելելու. «Բարեկամներ»
ու. պէս հագուագիւս գոհար մը:

Խաչակաւն նոր գրականութեան այս գեղեցիկ
գլուխ գործոցներէն մին՝ հեղինակութիւն Ճեթչամօ
Բօլետտիլ իրօք շատ մօտէն կը ջօշալիէ Իպսէնի
աշխարհահռչակ Ծօք. Շթօքմանը:

Յանաչի է իր կրկին շատեր գրկուեցան ընկեր-
վարական այս իմաստալից եւ յաջող ներկայացու-
մէն:

Պրն. Զարիֆեան միշտ յաջող, միշտ բնական
նախագահն էր, կանգնած գաղափարական հաստատ
հիմերու վրայ, պատրաստ գոնելու ամէն ինչ:

Տիկին Արաքս՝ կարծես որ բուն դերին մէջն էր,
մանկունակ, չնորհալի եւ գուարթ, անգիտակ իր
հայրը չարչարող վիշտերուն՝ օրհնութիւն եղած էր
անոր դժբաղդ օճախին:

Օր. Դիանա այս անգամ ցուշուր իր կարողութ-
իւնը սիրունիկի դժուարին դերին մէջ՝ յաջող եւ ա-
մենաբնական դերակատարութիւնով մը:

Իրօք որքան մեծ ոյժ մըն է խումբին համար ու-
նենալ երկու այսպիսի կարող դերասանութիւններ:

Յաջող էին նաեւ բոլոր միւս դերակատարներու,
մանաւանդ յայտնութիւն մըն էր իզմիրցիին Պ Աշոտ
Մառաթեանց, որ որքան յաջող յուշարար նոյնքան եւ

վարկեա դերասանի իր տաղանդը հաստատեց իր
փափուկ դերովը:

Մինչեւ Երեքշաբթի գիշեր մենք Պ. Զարիֆեանը
նանցած էինք իբր առաջնակարգ ուրբերգակ բայց ս-
տիպուեցանք նաեւ ընդունիլ թէ ան նոյնքան եւ յա-
ջող կատակերգակ ալ է: Հիանալի էր ինք «Վարձու
Կին» ի հօրեղբօր դերին մէջ:

Սիրուն եւ ծիծաղաշարժ գաւեշտ մըն է «Վարձու
Կին» ք որուն մէջ Պ. Զարիֆեանէ զստ շատ յաջող
դերակատարութիւններ ունին Տիկին Արաքս Պ. Պ. Ա-
ւետեան, Ահարոնեան եւ Օր. Դիանա:

Հինքշաբթի գիշեր ալ խումբը, ներկայացուց Պա-
րոնեանի «Պաղտասար աղբար» ք եւ «Թիւրամացու-
թիւն» ծիծաղաշարժ խաղը:

Դարձեալ այն մեռելական բացակայութիւնը կը
սիրէր սրանին մէջ:

«Պաղտասար Աղբար» իր հիւսմալի հիւսուածքով
կատարեալ մէկ մանրանկար էր մեր Պաղտարա-
րանին:

Նոյն անկերջ, նոյն անհատնու. դիւանները, որոնց
մէջ պտուք էր մխրձուիլ իբրեւ չաբիւրնչուսի մը:
Պաղտասար աղբար իր կնոջ մէն բաժնուելու համար:

Յիշեալ խաչը, գոր Աբէլյան եւ ներկայացուց իզ-
միրի մէջ, առաջնութեան մրցանակը Պ. Զարիֆեանի
վիճակելուց, քանի որ այս վերջինը կրցած էր աւելի
բնական մարմնաւորել Պաղտասար Աղբարի դերը:

Տիկին Զարիֆեան Տիկին Անուշի դերին շատ յա-
ջող էր. Պր. Վահրամ Սվանեան իրօք ժէօն
բըբ մի է իսնճնաւորում մըն է: Թաղականներուն
երեքն ալ կրցան պատկերացնել այդ հին օրերու
դէմքմբը որոնցմէ տակաւին կան մեր մէջ:

Թիւրամացութիւն գաւեշտն ալ խիստ յաջող ան-
ցաւ, հալառակ դերասաններու ի շտախ չունենալ-
նուն:

Մէկ խօսքով խումբը իր բոլոր ներկայացումնե-
րուն մէջ ալ յաջողութիւններ ցոյց կուտայ բայց
եկու տես որ քաջալերանք է ունի:

Իզմիրցիներ, արդեօք ե՞րբ պիտի արթնանք եւ
քաջալերենք գեղարուեստը:

Թ. ԲՈՐԹԸՐ

ԶԱՐԻՖԵԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ Ընդհանուրի փափաքին
համեմատ այսօրակի կէսօրէ ետք երկրորդ անգամ կը
հերկայացնէ իր էն հիւսմալի խաղը՝ ՈՒՐԻԷԼ ԱԿՈՍԻԱ

ԻՍԹԻՖԱՆ ՄԵՍԵԼԵՍԻ

Էրմէնի Բաթրիքիսանէսի մէջլումը միւս թէլաթը էվէլքի կիւն ազթը իճթիմա իթմիշտիր. Մէճլիա Մէպուս-սանըն Էրմէնի ազալարը Բաթրիք է-Փէնտինին իաթիֆաուը մէսէլէտինին թէսվյշէսի իչուն քէնտի պէշլէրինտէ պիր գադարը վէրաիքլէրինի վէ պու գարարնամէնին պիր սուրէթինի Մէճ, լիսէ կէօնտէրուպ Չորիքչարթի ազ-չամը մէճլիսը մէգքիւր թէքթար իճ-թիմա իթտիկինտէ քէնտիլէրի տէ հա-զըր պուլունարաք պու մէսէլէ իլէ իշթիլալ իտէճէքլէրինի պիւտիւրմիշ տիր. պինսէն ալէյը մէճլիսը միւս թ-թէլաթ Չորիքչարթի ազչամը պիղ իճթիմա պու մէսէլէնին արիզ վէ տ-միք միւղաքքէրէսիլէ իշթիլալ իտի-լէճէքիտի:

— Էլեէվմ Մէրսինտէ պուլունան միւսթէֆի Սիւ Կաթողիկոսընա լա-զըմ կէլէն թէսհիլաթտա պուլունամք իչուն Պապը Ալիոէն Ատանա վալիսի ձէմալ Պէյէ պ'ր թէլլըրաֆ չէքիւմիշ օլտուղը էվէլճէ Սթանպուլ կազէթա-լարը հազմըլար իտի. ձէմալ պէյ

Համըն մուրախասասը իլէտիկէր իքի զաթա շէհրը մէգքիւրէ կիւսէրէք Կա-թողիկոս Էֆէնտիլէ մահալը մէմու-րիլէթինէ ապտէթ իթմէսինի ընճա իթմէլէրինի թաւսիլէ իտմիշտի. Ֆիւհանաքիքա զէվաթը մուստիլէյհում Մէրսինէ կիտուպ Կաթողիկոս Էֆէն-տիլի զիյարէթ իթմիշլէր վէ լազըմ կէլէն թէքլիֆաէ պուլունամըլար իտէ տէ միւշարը ալէյը անճաք հիւքիւմէ-թին վաալարըն ինճալ իթաիկի զէ-ման մագամընա ապտէթ իտէճէկինի պէյան իթմիշտիր. Հիլէթ ալտըզլա-րը պուճէվապը ձէմալ Պէյէ թէպլիղ իթմիշլէր. ձէմալ Պէյտէ պիր կիւն սօնրա պիլզաթ Մէրսինէ ազիմէթ վէ Կաթողիկոս Էֆէնտիլի պիլզիլարէ քէնտիօիլէ սամիմանէ պիր միւլա-քաթ իթմիշ վէ միւթալէպաթընըն սալ պիր զէմանտա հուսուլքէղիր օլ-տուղընը միւշահիտէ իտէճէկի հազ-զընտա թէէմինաթտա պուլունամը տըր. Կաթողիկոս Էֆէնտի պու թէէմինաթտան ֆէվքէլտաէ մէմնուն գաւմըլտըր:


ԼԻՆՃ ՄԵՍԵԼԵՍԻ

«Ոսմանիշէր Լօյտ» տա օգուհաուղը-նա կէօրէ Լինճ գուրանհասընըն Տէր-ստատէթ վէքիլլիկի տիւրէն Լօնտրա-յա պիր թէլէկրաֆնամէ քէշիտէ իտէ-րէք Մէճլիսը Մէպուսանը Օսմանին մուգարէրաթընտա պահա իթմիշ տիր: Մէգքիւր գուրանհա ինկիլթէրա հիւ-քիւմէթինտէ իաթիֆաուը իլէ իտէճէք վէ քէշիտէ իտիլէն թէլլըրաֆնամէնին ձէվապըտա օն կիւնէ գաաուր կիլէճէք տիր:

ԻՐԱՆ ՀՈՒՏՈՒՏԸՆՏԱՆ

«Լա Թիւրքի»նին վէրաիկի մուլի-մաթա կէօրէ Իրանիլէթալէթիանէսի-նէ վարիտ օլտն խապլըլէրէ նագա-րէն Օսմանըն-Իրան Հուսուտընտա իղթիշաշ Կէնիտէն պաշլամըլտըր Է-վէլի կիւն Իրան Սէֆիւրի Րիֆաթֆաշա իլէ միւլաքաթ իտէրէք մէսէլէի մէգ-քիւրէ հազզընտա միւշար ալէյհին նագաւըրը տըգաթընը ճէլպ իլէմիշ տիր. Րիֆաթ փաշա պու խուսուտա լազըմ կէլէնլէրէ թալիմաթ լազըմէ իթա օլունաճտղընը վէ գարիպէն հու-տուտա սիւքիւն վէ ասայիշին իյտտէ իտիլէճէյինի պէյան Էլէմիշտիր:

ՏՊԱՐԱՆ ՕՍՄԱՆԻԷ.— Յ. ՇԵՔԻՐԵԱՆ



Հապիգի Օսէոն փըլազալարը ֆիւվքնտա փըլազա թէստվուր իթմէյինիզ Էրմէնիճէ, Թիւրքճէ Բոււմա, Մուսէվիճէ պահուտա ֆրանսըզճա, իթալեանճա փըլազալարն րէք չոգ չէշիտլ'քի մագապտաքտ քիւլլիլէթլէ մէվճուտըր: Դաշտակցական, Հնչակեան, Բամր Որոտան կիպի կէ-քէք մուսիքա իլէ վէ կէրէք սէս իլէ Մաշլ վէ միլլի Էրմէնիճէ Շարգըլտըլմըզ վար տըր: Մաքէնալարմզ պիր Լիւրտան օն իքի լիւրայա գաաուր միւսթէլիֆ պոյտա տըր միւսթէլիմ վաթանտաշլարնտան մէրազլը օլալարն թէշրիֆլէրինի թէմէնին իտէրիմ:

Ի ԶՄԻՐՏԷ ՊԱԼՃԸԼԱՐ Ի ԶԻՆՏԷ ԷՅՈՒՊ ՍԱՊՐԻ ԹԻՃԱՐԷԹ ՀԱՆԵՍԻ:



Ա. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Քարափ, Մարտի օրվի անցքին մէջ

Ի ԶՄԻՐ

Ամեն տեղի համար տոմսակներ, մասնաւորաբար
Ամերիկայի համար խիստ ածան գիններով կը տրուին:

Ապահով եւ արագ փոխադրելու, պայմանաւ, Պոլսոյ եւ Եգիպտոսի համար ծրարներ եւ ամսական կը նշուանին:

Ցանձնարարութիւն ամեն տեսակ ապրանք:

Ճամբորդներու համար մաքուր եւ հագուստաւ նաւակներ վստահելի եւ կրթեայ նաւաւարներու միջոցաւ:

ՄԵԿՆՈՒՄ Ի ԶՄԻՐԵ

Եգիպտոս — 15 օրը անգամ մը Ռումանականով:

Պոլիս — ամեն Շաբաթ օրերը խտրականով:

« Ի ԶՄԻՐԼԻ » Ի ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Թերթիս ազդարարութեան գործակալութեան միակ նպատակն է, միշտ օգտակար հանդիսանալ հասարակութեան:

5 դրուշով պիտի տպուին 3 տողէ ամեն տեսակ ազդեր

Նոյնպէս իր գաւառի բացմաթիւ ընթերցողաց դիւրութիւններ տալու համար՝ պատրաստ է իրեն ուղղուած ասան տեսակ կարեւոր հարցմանց օրը օրին պատասխանել, պայմանաւ որ գրուելիք պատասխանին բօսղի ծախսը դրկուի իրեն: Կը նշուանի ամեն տեսակ արտածման ու ներածման ապրանք նմուշներ, կիւնացնէ ինչպէս քաղաքիս նոյնպէս Եւրոպայի մեծ քաղաքաց մէջ անոնց ծախուած գինները:

ՊԱՇՏՈՆ ՈՒ ԶՈՂՆԵՐ

Հայերէնի, Ֆրանսերէնի եւ հաշուականութեան համար երկատարող մը պաշտօն կը փնտռէ: Թիւ 1

Ֆրանսերէնի, Գերմաներէնի եւ ամերիկականութեան հմուտ ուսուցիչ մը մասնաւոր գասեր տալու պատրաստ է, գիւրամատչելի գնով Թիւ 2

32 տարեկան ուժեղ ու գործունեայ մարդ մը գործ կը փնտռէ, Իզմիրէ դուրս ալ կրնայ մեկնել: Թիւ 3

Սպիտակեղէններ լուսցող կիւն մը, եւ խիստ համեղ կերակուրներ եփող տղրի մը տուններու մէջ աշխատութեան գործ կուզեն: Թիւ 4

Երկատարող մը, որ ծանօթ է գրեթէ Անատոլիոյ բոլոր քաղաքներուն, կ'ուզէ ո'ւ է վաճառականի մը հաշտոյն աշխատելու: Թիւ 5

ԶԱՆԱԶԱՆ

Խիստ ածան գնով կը ծախուին 2-միւնիոյ մէջ տուն մը, Կէօքթէփէի կողմ 47 արտափար հող եւ մեծ վէճեր խանի մէջ երկու գրասենեակներ: Թիւ 10

Սինէմաթոկրափի գործակալութիւն մը արժէթուղթերու վրայ ընկերութիւն մը հիմնել կ'ուզէ: Մասնակցիլ փափաքողք դիմել Թիւ 11

Կը փնտռուի. 350 ոսկի արժողութեամբ տուն մը Հայնոցի եւ կամ Զայթաղերու մէջ. — Թիւ 18

Փոքր գրամագլխի տէրեր կը փնտռուին խիստ շահաւէտ գործի մաս: Թիւ ընկերութիւն կազմելու: Թիւ 17

4000 ոսկինոց Ֆէրհանէ մը կը ծախուի, կիզրոն տեղ. Շէնքը կը նայի երեք շուկայի վրայ: Թիւ 19

Վարձու սենեակներ կը փնտռուին կահաւորութեամբ ոչ: Թիւ 21

5 0)0 գուտ շահ բերող կալուածներ ունինք մեր տրամադրութեան տակ: Թիւ 20

Զմիւռնիոյ ամբողջ թաղերու մէջ գիւրամատչելի գներով վարձու տուններ եւ սենեակներ կը գտնուին մեր տրամադրութեան տակ: Թիւ 12

Հանքային մետաղներու խիստ հետաքրքիր եմ: Թիւ 14

Ամեն տեսակ մեքենաներու յանձնարարութիւններ կ'ստանանք: Թիւ 15

Կը ծախուի տպագրական ձեռքի մամուլ մը թան գինով: Թիւ 28

ՊԱՇՏՈՆԵԱՅ ՓՆՏՈՂՆԵՐ

Խիստ կարեւոր հաստատութիւն մը ամեն կողմէ ներկայացուցիչներ կը փնտռուի: Թիւ 8

Փոփխիծների մը համար (բլափէ) թուզուի: Թիւ 9

Հարուստ տուն մը տպատուհի կուզուի, 10—15 տարեկան: Թիւ 22

Արտօնատէր ՅԱԿՈՒ ՇԷՔԷՐԵԱՆ

Փափագողք կրնան դիմել իմ քաղաքապետուն. կեսօրէն մինչեւ ժամը 2